

W3BUSU

L P E Q R F

ՔԱՐԵՎԵՆ, ԱԶԳԵՅԻ, ԲԱԼՈՒՐԵՆ, ԵՒ ՏԵՒՏԵՆ,

Տարեկան գին կանիքի զուռուց 100 : Վեցամսեայ գին զուռուց 52 ½ : Եռամսեայ գին 26 ¾ :
Հինգ ստորագրուոց գոտուցին մեկ օրինակ իրեն ձրի դիմուի տրուի:
Այս Լրագիրը ամէն շաբաթ օրերը կը հրատարակուի :

Պօջանքն գուրս գացած Լրտպիթերուն Փօսթային ծախքը առնացին վրայ է :
Եթ շահին համար ցուր մը հրատարակեց ուղղոց դիմի վճարե տոցին 40 փարայ :
Նորատիդ Գրոց ծանուցու մը ձիք է : Դրաւսէն եկած նամակներուն Փօսթային ծախքը իրկրցը դիմի վճարե :

ԲԱՐԵՎԵՐ

‘T b f R F b L, A F f b f

ՊՈԼԵՄ 23 ՕԳՈՍՏՈՒ

կեց վսեմափայլ շալիլ փաշային և Պ. Աշնառէին փառաւոր նշան մը :

— Ենցեալները Այտանայի կառավարիչ շասան
փաշան և թարսուսի գաղղինացի քօնսօլ Պ. | Էսէ-
բը վաճառականութեան մերաբերեալ դործի մը
համար իրարու հետ վէճ մը ունէին : Աս վէճը
թէպէտ առաջուց բանի մը տեղ չի գրուեցաւ ,
բայց ետքը գէշ հետեւութիւններ ունեցաւ : Հի-
մա անանկ խոհէմ միջոցով մը աս վէճը լմնցուցին
որ թէ Բարձրագոյն դուռը և թէ Գաղղինայի գեռ
պանատունը գոհ եղան : Բարձրագոյն դուռը այս
ցաւալի վէճը լըմբնցունելու համար յատկացած
նամակ մը տուաւ Գաղղինայի վեմափայլ դեսպա-
նին , որն որ նոյն օրը լայտը ըստած գաղղինացի շո-
գենաւով թարսուս խրիեց որ իմացունէ Պ. | Է-
սէբին այս վէճին լըմբննալլ և միանգտամայն այս
գործին վրայօք պէտք եղած ծանօթութիները առյ :

— Տիարաբէքիրու համարակալ (աէֆդէբուար) Աիւլէյման էֆէնտիին՝ մեծազօր աէրութեան վե-
րաբերեալ գործերուն մէջ հաւատարիմ և գործու-
նեայ ըլլալուն վրայօք Տիարաբէքիրու կուսակալ
բարձրապատիւ փաշայն բարձրագոյն դրանը խըր-
կած նամակին մէջ վկայութիւն տուած էր : Աւսոի
առատագութ Խնքնակալն ալ ասոր այս տղէկու-
թիւնները ըստ արժանեայն վարձատրելու համար
հրաման ըրաւ որ յիշեալ Աիւլէյման էֆէնտիին
դրէմբանութեան պատիւ տրուի , և անօր յատկացեալ
նշաննը խրիուի : Բարձրապատիւ փոխարքույին կող-
մէն ալ այս երեւելի անձինս հաւատարմութեանը
և գործունէութեանը հաւանաւթեան և շնորհա-
կալութեան յատուկ գիր գրուեցաւ :

Նշաններուն հաւասար են : Եյտու ամենայնիւ անանիներ ալ կ'ըլլան՝ որ իրենց տրբուած նշանը անդամանդով զարդարուած կ'ուղեն : Աւստի յիշեալ խորհրդարաններուն անդամները ասանիներուն այս բազմանին ալ օրինաւոր գատելով որոշեցին որ՝ ով որ ուղենէն՝ նշան առնելին ետքը պիտք եղած ծախը բը ինքը վճարելով կրնայ իրեն առած նշանը անդամանդով զարդարել առալ : Ի՞այց ասոնց ալ անդամանդներուն որպիսութիւնը և որքանութիւնը ունեցած պատրույն աստիճանին հետ մէկ համեմատութիւն մը ունենալու է . և այս համեմատութեանս չափը միայն առաջիւց ՚ի վեր տէրութեան

— Ըսմ գտւառի Դարապլուս քաղաքին քաղաքական առկան առեանին անդամներէն Ապոթել Վէդահ աղայն շատ երեւելի գործերու մէջ լիէն ճարպի կութիւնը և հաւատարմութիւնը ցըցուցած ըլլուսլ, մէծաղօր Խնքնակալին հրամանաւը անոր արքունի ախոռատպետութեան (իսդապլի ամիրէ մուտիրլիկի) տրրուեցաւ, և նոյն պատույն յատկացեալ նշանը խրկուեցաւ : Եւ որովհետեւ այս անձը այս պատույս հասնելէն առաջ քաբուճի պաշտոնէն պատիւ ունէր, այն պատիւը և տնոր յառկացեալ նշանն ալ արքունի հրամանաւ անոր տղուն Վու համեմտ ազային արքուեցաւ :

գրամոց գործ արանին մէջ (զարպիսաննէն) պատուց
նշան շինողները գիտեն . ուստի նշաննին անդաման-
դով զարդարել տալ ուղղվները պէտք է որ այն գոր-
ծը յիշեալ գործարանին մէջ բանող արուեստաւոր-
ներուն յանձննեն . որպէս զի նշանին զարդը՝ պատ-
ռուցն աստիճանին յարմար եղածէն աւելի կամ
պակաս չըլլաց : Եշ երբ որ այս նշանները ունեցող
մարդիկը մեռնելով նշանը բայց մնայ և մեծազօր
տէրութեան կողմը խրսկուիլ պէտք ըլլաց նէ՝ վրայի
անդամանները որովհետեւ այն նշանը կրող մար-
դուն իւր բուն ստացուածքն են , նշանին վրային
քակուին և մեռնողին օրինաւոր ժառանգներուն
տրուին , և մերկ ոսկի նշանը տէրութեան կողմը

— Կիսքոս կղզին կուսակալ մինչմիան շասան
փաշայն այն պաշտօնէն հանուելով՝ նցն պաշտօնը
մինչմիանութեան աստիճանին հետ մէկ տեղ մեծագոր
տէրութիւնը չնորհեց Խամայիլ Ատիլ աղային, որ
ասկեց առաջ ժաբուճի պաշտոնէն պատառուալ Ոօֆի
այի ժայտախան էր: Ասոր ալ գրան գործակալութիւնը
(քաբու քեախեասիցութիւնը) յանձնուեցաւ Նու-
րի պէկին, որ առաջիուց ալ Կիսքոսի կուսակալ
շասան փաշային գրան գործակալ էր:

դասնայ : Յիշեալ ժողովը լիները՝ այս որոշմանս հաս-
տառութիւն առնելու համար մեծազօր Խնդնակալին
ծանուցին . որ իրեն բարձրագոյն հրամանաւը հաս-
տառեց , և այսպէս ՚ի գործ դըրուելուն հրաման
ըրաւ . ուստի ամէնուն ծանօթ ըլլալու համար մե-
ծազօր տէրութեան հրամանաւը լրագիրերուն մէջն
ալ հրատարակուեցաւ :

տեղ՝ Պէյլքրպէյի Աբրունի պալատը գացին և մեծաղօր Խթնակալին հետ խօսելու պատիւը ունեցան։ Արտաքին գործոց պաշտօնատար վսեմափայլ Ալէ ֆէնտին ալ ներկայ էր։

ալ հրատարակուեցաւ :
— Քանի մը ամիս կայ որ վեհափառ Խնքնակալը
իր կենդանագիրը խրկեր էր Վոռոնցօվ իշխանին,
և շատ ալ պատույ նշաններ կամիսասի կառավարու-
թեանը մեծամեծ նախարարներուն . այս նշանները
թիֆլիզ տաննելուն պատիւը բարձրապատիւ ծախա-
պես չալիլ փաշյախն թարգմանիչ Պ. Մանսաէին
յանձնուեցաւ : Ուստի Ուուսիայի Խնքնակալը
առ ՚ի նշան երախտագիտութեան զարմանալի գե-
ղեցկութեամբ մը շնուած պատույ թուր մը խըր-

բիշի ձեռք չանցնի . ուստի այն կողմերը կ'ուշանայ, մինչեւ որ յիշեալ լշաղարը սպիթին ծրարը կ'առնէ . և ընաւ բանէ մը կատկած չունենալով՝ ծրարը ձեռքը բռնած ճամբայ կ'ելլէ դէպ ՚ի ծավեզը . Խթիրօն ալ ետեւէն : Հրեայն այս բաներէս տեղեկութիւն չունի . իր երթալու ճամբան կարձեցնելու համար՝ Կալաթայի Ենի ճամփ մղկիթին քովերը մէկ նեղ ճամբայ մը կը մոնէ , որից շատ մարդ չէր անցներ : Այս պարագայս Խթիրօյին ալ ուղածն էր . ուստի լշաղարը այս փողոցը մըսներուն պէս՝ Խթիրօն ետեւէն կը հասնի , և ոսկիին ծրարը ձեռքէն յափշտակելու ձեռք կը դարնէ . բայց հրեայն ծրարը ամուր բռնած էր . մարդը այն առաջին յարձակմամբը բան չի կրցաւ լնել : Բայց ճարտար գողը առաջկուց պէտք եղած պատրաստութիւնը ըրէր է . ձեռքը պատրաստ քթախոտ կայ եղեր . երբ տեսաւ որ ձեռքի ծրարը մէկէն յարձակմամբ չի կրցաւ յափշտակել , քըմախոտը հրեային տչքերուն նետեց : Աչքին կլակիծէն հրեային ձեռքը թուլցաւ , Խթիրօն ծրարը յափշտակելուն սկսաւ փախչիլ : Հրեայն ալ աչքերը շփելով , “ Ոսկիս յափշտակեց բանեցեք ո պուալով վաղելով Խթիրօյին ետեւէն ինկաւ : Պօստալուն ձայնէն շատ մարդ ժողուեցան . Խթիրօյին փախչիլը դժարցաւ . ուստի ինքը զինք մէկ քիրակձին մը խանութ նետեց . պատն ՚ի վեր պըլլը վեցաւ որ պատին միւս կողմը ցամկէ փախչի : Լշաղարը ետեւէն հառաւ , ոտքէն բանեց . բայց ուժը չուտեց , մարդը մեւս կողմը անցաւ : Հրեայները որ մինչեւ այն ատենը շատցած էին և իրենց ազգակցին գլխուն եկած վտանգը հասկըցէր էին , աղաղակը շատպուցին . բայցու-

թիւնը եվլցաւ . մարդը աղէկ հասկլցաւ որ այնքան բազմութեան ձեռքէն և աչքէն աղատելու ձար չի կայ . ձեռքի ծրարը մէկ դի մը նետեց , ինքը միւս կողմէն ոկրտաւ փախչել : Հոն գտնու ողներուն աչքը բարքած ըլլալով ոսկին ուր նետելլ չի տեսան . մարդը ձեռքէ չի հանելու ետեւէ էին . մինչեւ որ բըսնեցին , ոսկիին ծրարը կ'ուզէին : Մարդը կ'ըսէր թէ քովս անանկ բան չիկայ . և յիրտեի չիկար ալ . բայց յափշտակելը դիսցող և ծրարը ձեռքը տեսնաղ կար : Այն միջոցին պէօթէքձի Ահմէտ անուն մէկը , որուն խանութը բներէնակ բացարին եր , և ինքը էնինի ճամի օրինական լըւացում (ապահով) կ'առնէր , որ այս բազմութիւնը տեսաւ . և հետաքրքրութեամբ մը իր գործը լըմբնցընելէն ետքը ետեւնին իյնալով ծրարով ստին գտաւ . բայց տակաւին բանն ինչ ըլլալը չէր գիտեր . կը ինդար որ անանկ անակինկալ հարատութեն մը հասաւ . և ծրարը ձեռքը բունելով գնաց բազմութեանը մէջ մտաւ : Երբ որ բանը համկցաւ՝ ինչ ուրախութեամբ որ ոսկին գտած ատենը առաւ նէ , նցն ուրախութեամբ այն ծրարը ես գտայ ըսելով տուաւ . և ինքն ալ անոնց հետ ընկերելով ամէնքը մէկէն Դալաթայի Բօլցիան գացին : Այնքան բազմաթիւ վկայներով մարդուն յանցանքը սուուգուելով մարդը բանար գըրուեցաւ որ ուրիշներուն օրինակ ըլլալու համար արժանաւոր պատիմքը խորհուի և ՚ի գործ դրուի :

— Այսենէ մը ՚ի վեր բունուած գողերուն ձեռքը
գտնուած և տէրը չելած գողունիները լապիկէին . քավը
պահված կը մնային . բայց պահուելով ալ կ'աւրէին .
և տէրերինին ելլէր ուղէր ՚նէ՝ գրքի գալու բան մը
չեր կընար գտնեն : Հիմա նոր կարդաղքութիւն եւ-
զաւ , որ անանկ զապիկէին ձեռքը անցած և տէրը չի
գրտնուած գողունիները արժանաւոր զնովը ծախ-
լին . և գինը ուժիւր կայլ այսինքն յանձնուի . և
թէ որ տէրը ելլէ ՚նէ՝ իր ընչեցը գինը առնէ : Այս
նօրէնութիւնը մեծ ազօր Խնդիակալին յատուկ հը-
ռովարտակով հաստատուեցաւ . և ասկէց ետքը ա-
ռանկ ՚ի գործ դրուելիքը առնենուն իմացընելու հա-
նար լրագրոց մեջն ալ հրատարակուեցաւ :

լնիթացքը հարիւր քսան տարի է (քսո տաճկաց, որ
Դաւիթ մարդարէն եօմանասուն և մինչեւ ութ-
սուն տարի կը դնէ, աւելի երկար ապրողները և
հանդիսու կեանիք անցընողները բացառութիւն ը-
նելով, և այնքանէն աւելի կեանիքը ցաւօք և հե-
ծութեամբ կ'ըլլաց ըսելալ), բայց Վատուածային
գերադայն տնօրինութիւն ունէ որ մարդոց կեանիքը
մաշնցընելու պատճառ մը ըլլաց, և բնական կազ-
մութիւնը զօրաւոր ըլլաց, և մարդու ուտեկլու խմե-
լու և ուրիշ կիրքերու և տիսորժակներու չափա-
զանցութենեն զբուշնայ նէ, և չնշառութեամբ
ներս քաշած օդն ալ աղէկ և առողջաբար ըլլայ նէ՝
կենացը ընթացքը հարիւր քսանիք կ'անցնի։ Եռ-
ներու և բարձր գաշտերու (եայլաներու) բնակիլիչ-
ներուն մէջ երկարակեաց մարդիկ շոտ կը գանրավին։
և ասոր ասանի ըլլալը առնեն առեն օրին ոկներով
հաստատած է։ Վատնի օրինակներուն կարգը այս
ալ կը մըտնէ։

Բայիկ Առաջայու գուաառը բնակող տրաբացի
ներուն Պէրզէքը ցեղէն Շատըմ խպնի Վազաս ա-
նուն մէկը , որ հիմա աղէպու Դիլ հասալ գիւղը
կը բնակի , հարիւր տան և երկու տարուան ըլլալով ,
մայրն ալ տակաւին կենդանի և տռցի է , և տա-
րիքը 135 է : Այս կնոջս վրայ ծերութեան նշաններ
կ'երեւին . բայց տղայն տեսնողը 60 կամ 70 տար-
վան մարդ մը կը կարծէ . և օրը քալելով 10 ժամու-
ճամբաց կրնայ առնել . և ամեն օր առառընէ մին-
չեւ երիկուն երկրագործութեան գժուարին գոր-
ծութ կը պարապի : Այս մարդու երեսուն և երկու
տղայ սւնեցեր է . որոնցմէ միայն 15 հատը հիմա
ողջ են . պինտ մէծն է 70 տարուան , և պղտիկը 17
տարուան :

— Պազտատէն եկած վերջին սուրհանդակէն ,
Առևսուլին վրայօք անանի կ'իմանանք որ , թէ հոն և
թէ քիւրտիսանի բոլը կողմերը որ իւեն մօտերն
են , գրեթէ բոլորովին խաղաղացեր են : Ապարա-
բսպետ վսեմափայլ (Սաման փաշան դեռ Վան-
քաղաքն է :

— (Օտէսայէն օգոստոս 10 թուականով եկած նախակիները կ'իմացունեն որ քը գրեթէ բոլորովին կտրեր է թիֆլիզ, նոյնպէս թականոօք աղառ ջինին պէս չէ մնացեր : Բայց ասոր փոխարէն սաստիկ կոտորած ըրեր է Ռօսթօք, Մարիանու-պօլիս և հարաւային Ռուսիայի շատ քաղաքները : Ռօսթօք իրեք շաբթուան մէջ 8000 հոգիին մէջէն 2000 հոգի մեռեր են : Այս հիւանդութիւնը անանկ վախ մը ձգեր է որ, Ռօսթօքէն (Օտէսայի ճանապարհը հօմիա չի դար երթար կոր :

CELESTE B. LOPEZ

ԱՏՍԴՐԻԱ : Վ իշննա . Խոալիս երթալու պատրաստուած զօրբերուն հրամանն ելաւ որ չերթան : Այս հակառակ հրամանին ինչ պատճառաւ ըլլալը չկատարվ . ինչու որ այս զօրբին անսնկ պատուէր տըրք վնէր էր առաջուց , որ ամէն ժամանակ պատրաստ ըլլան , որպէս զի հրամանն եղած օրը առանց դըժուարութեան երթան :

ՍՊԱՆԻԱ : Վատղիսի լրագիրը արքունի հրաման մը կը հրատարակէ որով սեպտեմբեր 19 սկսելով՝ այս քաղաքին ներսի կողմէրը մաքսը պիտի վերնայ : Ուստի աս սահմանուած օրէն ետքը ինչ ապրանք կ'ըլլայ նէ ըլլայ, առանց մաքս տալու պիտի կրնայ այս տէրութեան ներսի կողմէրը ընդունուիլ :

Վ'ըսեն թէ Ըորթուկալէն եկած զօբքը որ Այսու
րիտ պիտի մըսնար, հրաման եղէր է որ 'Նալարբա
երթան :

Ի ԴԱԼԻ Ա : Բալերմ . Ջէօնկիլ իշխանին հրա-
մանատարութեամբը կրթութեան համար յատկա-
ցած նաւատառիզլ Բալերմ հասու և երկաթնե-
տեց , երբ հասաւ այս նաւատառիմիզլ , տեղւոսք բլ-
նակիչները՝ որ քանի մը օր առաջ գիտէին ասոր գա-
լը , շատ ուրախացան : Ուստի սովորութեանը հա-
մեմատ թնդանօթներով բարեւելէն ետքը , անթիւ
բազմութիւն մը ծովեղերքը թափեցաւ և անկէ
նաւերը , ուր եկած օրէն ինչուան գացած օրը լե-
ցուն մարդ կար : Եւ ամէն գացողներուն անխըռա-
րաբար պատիւ կ'ընէին : Ամէն մարդ կը պատմեն
այս նաւերուն պաշտօնատարներուն իրենց ըրած
պատիւները զուարթ երեսով մը ընդունելին և
վերջապէս նաւերուն մաքրութիւնը : Կաթօլիկ
և Մի իլիսյի արքան և թագուհին Բալերմ ե-
լին , Ամենքա Ոօղակիս բառած տնախաճառին տարե-
կան հանեգէսը տեսնելու համար , և այս նաւատառ-
միզին արքայազուն հրամանատարին համար փառա-
ւոր յարք մը պատրաստեր էին . ուստի թագուհ-
րը խրկեց իր պաշտօնատարներուն մէկը այս հրա-

մանաւարին, որ երթայ իր կողմէն անիկայ քարեւէ
և հրաւիրէ իր պալատը բնակելու : Թէպէտ իշխա-
նը չուզեց երթալ բնակիլ հօն, բայց միայն տեսնա-
լու համար շուտով ելաւ գնաց :

բարեանի կոմիսին և, քանի մը նախարարներուն հետ
գնաց տեսնուալելու բարձրապատիւ իշխանին հետ :
Ուստի թէ գայցած ատենը և թէ եկած ատենը 21
ական թնդանօդ նետեցին, և ասոնց իրարու հետ
տեսնուած բոլոր ժամանակը նաւերը՝ Կարօլիի
տէրութեան գրօշակը քաշեր էին. նաեւ երկու
Կարօլիթանի քը կային նաւահանգիստը, որ ա-
նոնք ալ Գաղղիս հռագոցն գրօշակը քաշեցին : Այս
հանդէսը որ հինգ օր քեց եւելոք զարմացուց և
զուարձացուց նաւատարմիզը : Տեղւցոս զօրապետ-
ները կը հրաւիրէին պաշտօնատարները ընկլիք մե-
ծամեծ հանդէսները և լրւատորութիւնները տես-
նալու : Կաեւ հարուստ մարդիկի ալ զանոնք իրենց
առնու եւ հայու եւելին փառաւ որ կուսանանքու :

տունը կը հրաւիրէին փառաւոր կոչունքներու : Այս նաև առօրմիջը Բալէումօ կեցած առենքը զանազան կրթութիւններ ըրաւ , որ այս քաղըթին գեղեցիկ և նոր տեսարան մըն էր : Այս խաղերը այնչափ ոց մարդոց հետաքրքրութիւնը կը շատցունէին որ շատերը նաւերը կը վազէին կուգային : Կաւասպարտին մէջ նաւ մը կար որ գրեթէ ամէն մարդ հոն երթալ կ'ուղարկը յուսալով որ հոն կրնայ տեսնալ հրամանառար արքայազուն իշխանն : Բայց ան ալ դժբաղդաբար երբեմն իրիկուլները միայն նաւեկն գուրս կ'ելլար և տնծանօթ կերպարանքով մը կը պըտընէր : Վակայն մէծ մարդի կիններէն շատերը գացին տեսնուեցան հետու և շատ անդամ ալ կերակուր ու տելու հրաւիրուեցան : Այս մարդոցը միաքէն չի կարուի առ առ առ առ առ :

պիտի ելլոյ հրամնեատար իշխանին իրենց ցըցուցած սէրը և ըրտծ պատիւը : Ա Երջապէս նաւառարմիզը հօսկէ մեկնեցաւ և Ետքօլիք գնաց : Հիմա զարմանտլին սա է որ 20 օր նաւառարմիզը հօսկեցաւ և նաւառաբները քաղըին մէջը ամէն օր ժուռ կուգային , ամէնեւին վէճ մը կամ մէկ խըստվութիւն մը չեղաւ :

ԳԵՐԵԶՄԱՆ ԼՐԻՔ

Հնական արիած : Անցածները Պուանսայի մէկ
կողմը կայծակ ինջնալով՝ մէկ խեղճ մարդ մը զար-
կեր մեւցուցեր է : Այս մարդուն մէջքը մէկ ծրա-
րի մը մէջ կապած վեց ոսկի կայ եղեր, որ անարտատ
մնացեր են . բայց այն տակիներուն վրայի պատկերն
ու գերը յար և նման՝ զարնուող մարդուն ուսերուն
վրայ տպուած ըլլալ՝ մարդը թաղելու համար մեր-
կացուցած ատենինին տեսեր և պատմութիւնը Փա-
րիզու գիտութեանց ձեմարանին ծանուցեր են :

Կայծակը շատ արտառուց բաներ կ'ընէ , որոնց բը
նական պատճառը մինչեւ հիմոց խելք հասնելու
կերպով գտնուած չէ : Իսկ ասանկ բաներ ուրիշ
անդամ ալ ըրած ըլլալը՝ հիմակուան պատմուածին
ստուգութեանը՝ համար կը պատմէ նցյ ձեմարտնին
ատենագովիրը : 1825 ին՝ պուծն սերվ ըստուած պրիվանդին
նաւու մը վրայ կայծակ ինչեր էր . Ա էնէտիկու ծու
վածոցյն բերանը երկաթի վրայ կեցած ատենը :
Այս նաւուս առջեւի կողմի կայմին վրայ մէկ պացու
կամ ձիս ոսքի երկաթ մը գամած էր , որ զոնիսկան
ծովուն կղզիներուն նաւորդները ասանկ սովորուի
մը ունին : Կայմին տակը՝ Աքաւոքանդօ կղզին Են-
գոնիօ թէկոդօրօ անունով մէկը նաստած իր շապիկը
կը կարկատէր . կայծակը կայմին վրայ ինչնալով վերէն
վար փորելէն ետքը այս մարդս ալ զարկաւ , որ նոյն
հետայն մեռաւ : Աերկացուցին , գեղագոցն սև մէկ
երկար գիծ մը գտան , որ շըլլինքէն սկսելով մինչեւ
մէջքը կը հասնէր , և մէջքը ձիու երկաթի տիպ տե-
սան կայմին վրայ գամաւածին ձիշտ չափուիք :

Օ անդայի առաջ այն ատենը մէկ ուրիշ պրիվանտին
նաւ մըն ալ զարնուեցաւ կայծակէ, և կայմը բռն-
կեցաւ, և ուրիշ զարմանալի բաներ ընելէն զատ նա-
ւաստիներուն մէկն ալ զարկաւ մեռցուց : Խռնակի
վրայ փռվեցաւ մարդը . և վրան ամենեւին զարմուե-
լէն մնացած նշան մը չէր երեւէք : Բայց երբ որ
թաղելու համար մէրկայցուցին՝ կուրծքքին վրան ձախ
կողմը գտան 4 . 4 թուանշանները դրոշմած, մէջ
տեղի կէտովլը, որ ընկերներուն ամենն ալ կը վկայէ-
ին թէ առաջկուց անոր կուրծքը անանկ բան տե-
սած չունէին : Այս թուանշաններս խոշոր, յատակ
և աղէկ տպուած, ամեն կողմէն, մինչեւ մէջ տե-
ղի կէտովին ալ նման էին կայմին վրայի շապաներուն
մէկուն վրայ գտնուած նոյն թուանշաններուն . որ
այն շապանեւ կայմին ու այս զարմուած մարդուն պառ-
կած տեղին մէջ տեղին էր . և յայսնի է որ՝ կայծակը
անկէց անցնելն իրէն այն թուանշաններուն նմանու-
թիւնը առեր բերեր այն մարդուն կուրծքին վրայ
զարկեր է, Բայց ասիկայ ինչպէս կրնայ ըլլալ . հա-

կրցուած չէ . ինչպէս որ կայծակին ըրածներուն մէջ
շատ բան կայ որ հասկցուած չէ , և կարելի է որ բը-
նաւ երբէք ալ չի պիտի հասկցուի : Ոյնչեւ հիմայ
տեսնուածները հանքային բաներու վրայի պատկեր-
ներն են որ կայծակը կ'առնէ ուրիշ տեղ կը զարնէ
կոր : Դյուզինիէրի բնադէտը ասիկայ դիտած էր , և
իրեն բնագիտութեան գրքին մէջը նշանակած էր :
Ծ.է որ այս գործողութեանս բնական ճամբան գլու-
նըլի նէ՝ ելեքտրական գործիքով ալ կրնայ ՚ի գործ
գրութիւն . քանզի կայծակին նիւթը ելեքտրական հե-
ղուկն է , ուրիշ բան չէ . և այն ատենը Ելեքտրական
դրամի արուեստ մըն ալ կը հնարիլ . հանքային նիւ-
թի մը վրայ փորուած պատկերը խիստ քիչ ատենի
մէջ և մէկ պարզ գործողութեամբ մը ուրիշ նիւթի
մը վրայ առնելով :

U. S. G. E. S. P. U.

Որովհետեւ բարձր սրբազն Պատրիարք Հայութինիս հարկած է առաջարկ կատարել Ամամեթիայու քառաշաբաթին քառաշաբաթին օրը ստիպուեցաւ աղբային հիւանդանոցը Երթալու գեռ քննութիւնը կատարեալ չի վերջացած, ուստի ամսոյն եօթնին յատկագէս նոյն բարեհուչակ գոլրոցին այցելութեան գնալու բարեհաճեցաւ և մասնաւոր քննութիւնն մը լնել տալով իւր ներկայութեանը բոլոր ուսման դասերուն՝ շատ գոհ եղաւ աշակերտաց յառաջադիմութենէն, աղբու խրատներով և յորդու բանդուներով հայրաբար յորդուեց զանանք որպէս զի առաւել քաջալերին իրենց ուսումնացը մէջ և վերջապէս օրհնելով թէ աշակերտները թէ անոնց դասաւուները և թէ գոլրոցին բոլոր խնամածուները մանաւանդ անոր անօրէնը արգոյ Ենթանիկ աղայն և ամէն մէկէն դատ դատ շնորհակալ բլու մեկնեցաւ անկէ :

Վիճակագրութիւն քաղաքին Հայ բնակիչները թէ տան տէր, և թէ վարձքով տուն բնակող, երկու հարիւր իննուուն և հինգ տուն են. որոնց մէջ բնակող է բիի մարդիկի մեծ պլատիկ, կառավարութեան ցուցակին մէջ 900 հոգի նշանակած են. կիրկ և աղջիկ, և ցուցակին մէջ ըստրուած մանր տղայքն ալ հետ առնելով՝ 2000 հոգիէն տւելի ըլլալ կարելի է: Քաղաքը երեք եկեղեցից ունի. սուրբ (Գ) սենեսիոն տուաշնորդական եկեղեցին, որ սուրբ Աստուածածին ալ կ'ըստուի. սուրբ Աստվաննոս, որ բնակիչները չարխափան կ'ըստեն. և սուրբ Յովհաննէս, որ սուրբ Խաչ ալ կ'ըսմիլ: Երեքն ալ հին են. բայց Աստուածային պաշտօն երեքին մէջն ալ կը կատարի: Չորս քահանաց կայ, որ ժողովուրդին հստեմաստութեամբ քիչ են: Ոչկ արու մանկանց դպրուուն մը ունի. որուն մէջ կան երկու վարձապետ. մէկը քերականութիւն և ճարտասանութիւն կը սորվէցընէ, և միւսը հասարակ լնիթերցմունք և գիր կը սորվէցընէ: Աշակերտաներն են 160 աղայ: Երեք տեղալ աղջիկներուն համար սահմանուած է, որ հօն կը ժողվուին և հասարակ լնիթերցմունք կը կարդան. և այս ուսման հետեւող աղջիկները քառասունի չափ կ'ել լին: Քանի մի մասւոր աղջիկներ, բաելէ թէ՝ քիչ մին ալ չափահաս, մանչերուն դպրատառնը կ'երթանքերականութիւն սորվէլու: Կը վախնամ բաելու թէ

ասիկաց աղջկէ չեն ըներ տեղացիք, որ խելացի աղջկէներուն թող կուտան խելացի մանչէրուն հետքերականութիւն սորվելու պատճառաւ մէկ դպրատան մէջ առառութնէ մինչեւ իրիկուն ժամանակ անցըընեւ: Այս վախճամբ ըսի շըլայ որ կարծիք տամ թէ աղջիկներուն քերականութիւն սորվելուն թշնամի եմ: Այդ բանը ինձի չոփ սրտի մոօք ուզող չկայ. բայց աղջիկները այդ բանին մէջ վարձելու ուրիշ ձամքայ կայ. մանչ աղջիկ մէկ դպրատան մէջ լեցընելը, ինչ պատճառով կ'ըլլայ նէ ըլլայ, վասնգաւորէ. բարբերնին կ'աւրուի, թէ և փարժապետը մարդու ձեռքէ եկած ամէն զգուշուները ընէ, որ ազգն որ այս դրութեամբս կը վարվին նէ՝ անոր մէջէն ողբայի չարութեան օրինակները պակաս չեն: Այսոր համար թրապիզնցի բարեպաշտ և ուսումնասէր մարդոյը կ'առաջարկեմք, որ ուսման դասառու վարժապետը թէ որ բարուցը կոզմէն հաւասարմութիւնը չունենայ նէ վարժապետ չեն ըներ), չըստարտաւորեն առառութնէ մինչեւ իրիկուն մէկ դպրատուն մը նըստելու. այլ ժամանակ յատիկացընեն, որ այն ատենը արու մանկանց դաս տայ, և անկէց ետքը ժամանակ ունենայ աղջիկներուն ալ քերականութիւն դաս տալու երթայ: Քերականութիւն սորվելու աղջիկներն ալ ժողվել և մանչերուն դպրատունը լշցնելուն տեղը՝ վերսիշեալ երեք դպրատուններուն որն որ

մանչերուն դպրատունին աւելի մօտ է նէ՝ անիկաց
օրիորդաց շասարան յատկացը ընեն, որ վարժապետին ալ
հոն երթալը դիւրին ըլլայ. և աղջկանց ալբարոյա-
կան կառավալորութիւնը մէկ պարկեցան և խելացի կը-
նիկ մարդու մը յանձնութիւն արժապետին ալպէտք
է խնամով նայելով նոյն իսկ աղջկիներուն մէջէն մէկ
երկու հոգի ընտրել, և անոնք տուանձին վարժել,
որ քիչ ատենէն եաբք անսնք բաւական ըլլան աղջ-
կանց վարժապետ ըլլալուն : Այն ատենը կրնանք ըսել
թէ թշրապիղըն բարեկարգեալ դպրատուն կայ աղ-
ջիկներու համար . հիմայ տակաւին տափկաց ըսելու
համարձակութիւն չունիմք :

Քաղաքէն մէկ ժամաւ շափ հեռու է Ամենափր
կիչ ըստած վանքը, Հայոց Պէտ (Վրիսառափ 1424)
թուին շինուած է . ուստի շատ հին է, և շատ աղ-
քատ, առջւայն օգը գէշ ըլլալուն համար երկար ա-
տեն հան կինալու յանձնառու եղաղ կրօնաւորին
կենացը վտանգ կուգայ քիչ ատենի մէջ . և քաղա-
քացիք ալ միայն ապրիլ, մայիս և յունիս ամիսնե-
րուն մէջ հան ուխտի կ'երթան . և այն ատենուան
համար քաղաքէն կամ վիճակէն քահանայ մը և
տնտես մը և աթուակալ մը կ'երթայ : Աթուակա-
լին գործն է վանքին եկամուտին և ծափերուն
մերակազութիւն ընել :

Ծրագրիցոնի առաջնորդութեան վիճակներն են ասոնք

Օէֆանօղ. քաղաքին արեւելքան կողմն է մէկ ժամու չափ հեռու . բնակիչներն են 30 տուն չայ . որ շատ աղքատ ըլլալսվ, թէպէտ փափաք ունին դպրատուն ունենալու , և ասիէց երեք տարի առաջ բաւական ամսական մը կըսրելալ վարժապետ մը բռնած էին գ.նէ հասարակ կարգալ գրել մը արք վեցընելու համար գիւղին աղջոյը, բայց ան ալ չի կրնալսվ վճարել հարկ եզաւ կամաց ակտմաց վարժապետին ճամբար տալու : Եկեղեցի ալ չունեին . քաղաքիներուն օգնութեամբը մէկ եկեղեցի մը չինուեցաւ հօն սուրբ Յէտուրոս անուամբ :

Սահմանութեան : Օէ Քանօղէն երիտու ժամ հեռու .
բնակիչները 40 տուն այ . եկեղեցի մը ունին սուրբ
ուստաւորչի անուամբ , և քահանայ մը , որ այս գիւ-
ղիս աղջայը պարու ընթերցմունք ալ կը սորվեցընէ ,
Օէ Քանօղ գիւղին ալ քահանայութիւն կ'ընէ . ը-
սէլ է որ՝ այս գիւղիս աղջայ ուստան մէջ կրթու-
թիւննին թերի է :

Ըստ : Ամանորսքասյէն երեք ժամ հեռու , 60
սուն չոյ բնակիչ . մէկ եկեղեցի սուրբ Գէորգ
անուանը . և մէկ քահանոց , որ գիւղին տղացը կար-
դալ աւ կը սորմէցընէ :

Նէ, գիւղին տղայքն ալ կը կարդ ացընէ՛ : Եէկն ալ
բաղաքը աւնել . քանզի ինչպէս որ լսինք , քաղա-
քին քահանայները ժողովուրդին համեմատելով քիչ
են : Քահանայն երկուք մնայ նէ՝ կ'երեւի որ ապրե-
լու այնքան գժուարութիւն չեն քաշեր : Յաւ է որ
չորս քահանայ կենայ հոս , և տղայը կարդալ սորմիւ-
ցընալչի գտնուի : Ուշ որ երկուք մնայ նէ՝ աղայքը
կարդալ կը սորմին . քահանայները ասպաւսա-
գտնելու համար թափառական պրոլտելու չեն հար-
կագրիք . այն առեղի ժողովուրդը հովիւելով և աղայ-
քը կրթելով ապրուստ կը գտնեն :

ՈՒ-ՐՁՆԵ : Կալավիկայէն ութ ժամ հեռու է . և
ասոր շրջակայ տեղերը լեռներաւն մէջ ցրուած երե-
սուն տաւնի չափ չայ . առուրբ լ ուսաւորչի ան-
ուամբ եկեղեցի մը և քահանայ մը ունին , բայց ժո-
ղվուրդը ցրուեալ ըլլալուն համար տղայքը կարդալ
գրել սորմելէն զուրկ մնացած են :

Վ էրանէ գեօ : Յժուապիզոնի հարաւ կողմը կ'յնայ ,
քաղաքէն և օժն ժամ հեռու . 100 տուն ժողովուրդ
ունի , մէկ եկեղեցի մը սուբբ Ասրդիս անուամբ ,
և մէկ քահանայ մը : Վ իճակագրութիւնը չձանու-
ցաներ թէ արդեօք այս քահանայս ալ գեղին տը-
լացըը կը կարդացընէ թէ չէ : 100 տնուոր գիւղ
մը՝ կ'արժէ որ գպրատուն մը ունենայ . և թէ որ
տղայքը կըթելու համար առանձին վարժապետի
բաւական չեն նէ՝ գոնէ այս գործս քահանայի յանձ-
նեն նէ գէշ չեն ըներ :

Ո՞ւզ : Քաղաքին արեւմտեան կողմն է , տասն ժամու չափ հեռախ . 130 տասն չափ բնակիչ ունին այս դիս այն դին լեռներուն մէջ ցըսւած . և առ հասարակ երկրագործ . երկիրնին միայն լազուտ կամ մըս-

բացորեն կը բերէ . այն ալ իրենց հազիւ բաւական
կ'ըլլայ . ըստէ է որ՝ խեղչ կ'ապրին : ԱՇկ եկեղեցի
մը ունին սուրբ Արքիս անուն , և մէկ քահանայ
մը : Տղայքնին կարդալ սորվելէն ալ զուրկ են :

զոնէն քսան և չըրս յամ հեռի, 30 տուն բնակից
Հայ ունի . և մէկ եկեղեցի մը տուրբ Կատուածա-
ծին անուամբ . մէկ հաս քահանայ ունին . այն ալ
գրսեցի, որ աղջոն ալ կարդալ գրել կը սորվեցընէ :
Կը յաւսացուի որ քանի մը տարի անցնելեն ետքը
բնիկ տեղացի քահանայ ալ կրնան ունենալ . բայց
այս յցոր չունիմք այն տեղերուն համար, որ թէ-
պէտ տեղացի մէկ կամ երկու քահանայ ունին . բայց
գիւղին աղջոյքը կարդացընող չիայ . ետքը քահանայ
պէտք ըլլայ նէ՝ գիւղին մէջ կարդալ գիւղող մարդ-
պիտի չի գտնուի որ քահանայ ըլլայ : Արիկայ ըսել
չէ որ կարդալ սորվելուն նպատակը քահանայու-
թիւնը ըլլալու է : Կարդալ սորվելուն նպատակը՝
կրթեալ մարդ ըլլանէ : Քահանայ պէտք ըլլայ նէ
կարդալ գիւղողներէն կ'առնուի . բայց կարդալ
գիւղողները ամէնն ալ քահանայ չին ըլլար :

• Պիրեսոն : Թօրիազօլիէն տասն և երկու ժամ հետ-
ուի մէկ գիւղաքաղաք մին է, որ հին առենը մէծկակ
քաղաք մըն էր. բնակիչներուն 35 տասնը հայ են. որ
քարե փորուած եկեղեցի մը ունին սուրբ Աստված
անուամբ. և մէկ քահանայ մը : Այս տեղացիք գրե-
թէ բոլորն ալ արուեստաւոր են :

Երջիպեղագոսի վրայ Խղմիր քաղաքը լինէ է նէ՝

սե ծովու վրայ ալ թրապիզոն քաղաքը այն է . մա-
նուանդ հիմայ՝ որ շատենաւեր անապակաս երթեւե-
կութիւն կ'ընեն այս քաղաքս : Վանց երթեւեկու-
թեամբը քաղաքս սե ծովու մեծ և անուանի վա-
ճառաւատեղիներէն մէկը եղաւ . այսատան և Պարո-
կաստան , և Վարքեատան , սե ծովի վրայ այս քաղա-
քըս ունին իրենց նաւահանգիստ . թէ Ճանապար-
հորդ և թէ ապրանկ՝ այն հեռաւերը երկիրներէն հո-
կուգաց . ասկէց նաւերը կը գրվի , Ռոտամպօլ , Ուու-
սաստան , Եւրոպա , և բալըր աշխարհք ասկէց կը
տարածի : Եւրոպայի ապրանքներն ալ ասկէց յիշեալ
երկիրները կ'երթան : Վայ ըսածէս կը ծագէ բնա-
պէս այս հարցումքս : Իզմիրցիք իրենց երկրին գիր-
քը վաճառականութեան յարմար ըլլարուն համար
աղէկ կը շահին , և եղածին չափ հանդիսան կ'ապրին .
Թրապիզոնի երկրին ալ գիրքը վաճառականութեան
յարմար է . Թրապիզոնյիք ինչըն ապրելու կողմանէ-
նեղութիւն կը քաշեն : Երբ որ Իզմիրու վրայ ար-
ված տեղեկութիւնիս կարգաս , և Իզմիրցւոց ուսում-
նասիրութիւնն ու Թրապիզոնյիներուն ուսումնա-
միրութիւն իրարու հետ բաղդատեսնէ՝ հարցմանս պա-
տասխանը գիւրաւ . կը գանես : Կարգալ գրել չգիտ-
ցող մարդը մանմաթի (մուշանպայի) պէս , հարս-
ուութեան ծալուն մեջ ալ մոնէն նէ՝ վրան կամիլմը
հարսուութիւն չի պլաշկիր . անանկ գուրս կ'ելլէ :
Թրապիզոնի թէ քաղաքացիք և թէ գիւրացիք իրենց
աղքատութենէն աղատելու ուսումնաբէն զատ ձամ-
բայ չունին . թէ որ ուսմամբ և կրթութեամբ վա-
ճառաւականութեան կոնսներու տեղեկութիւն ըս-
տանան նէ՝ վերին Վախայի և Եւրոպայի իրարու հետ
ունեցած առուատուրը բոլորավին անոնց ձեռքը
մնցնելը բան մը բակէ չէ :

— Ըարերարութիւնը թէ բարերարողին և թէ բարերարեալին միօրինակ միշտ անուշէ . բայց երբոր սնախնկալ ժամու մը բարերարութիւնը կը գործուի նէ ան առևնը բարերարեալին առաւել անուշուգայ : Անոնիկ է նէ մեծարու ՈՒխաքեան վարերէս աղջային անկիեղծ աղլդասիրական ոգւլով Պուրմէշ գործած նշանաւոր բարերարութիւնները նոյն քաղաքի մերաղնէից չափազանց քաղցր եկած է անուարակցո . որովհետեւ բնաւ յոյս մը՝ ակնկալը թիւը չունեին որ ասանկ բարեւսէր և աղդասէր անձը անսակնեալ ժամու պիտի երթայ հոն , (յունիս 13) . Երբեւ յատկապէս վերին նախամնամութիւն խաւուած , գործածելու չի գալու չափ հինգած դըպուցնին իւր խոկ ծախսիւքը նորոգեւ տալու , ամէն սպրոցական բարեկարգութենէ զուրկ մնացած դըպուցներնուն բարեկարգութեանը ջանք ընելու , նոյն բարեկարգութեանը մէջ յաւիտեան մնալու համար նկերութիւն մը հաստատելու և ինքն ալ Արդյ նուշ շեան բարեպաշտ կարապետ աղջայի փոխանորութեամբը վերատեսուչ ըլլալու , և խիսյն՝ այս զգօգուտա գործին սկզբնաւորութեանը ձեռք զարելու համար առաջին առաջին անդամ եղած ժողովքին ժողովականներէն որը էին ,

Յակոբ աղա Շահումեան ,
Մահտեսի Յակոբ աղա Նազարէթեան ,
Կարապետ աղա Վնուշեան ,
Մահտեսի Յակոբ աղա Լենովիչ ,
Մետիք աղա Շահումեան ,
Մահտեսի Ախմոն աղա Փափամիչ ,
Մերայէլ աղա Վճեմեան ,
Ախմոն աղա Արդիսեան ,

Կարապետ աղա Աէֆէրեան ,
Կաստուր աղա Փոփովիչ ,
Աթուն աղա Պապիկեան ,
Կիւմիւշ աղա Մտեփանեան . և այլն ,
յն՝ 2,200 մաճառ ոսկի Խողովելու որպէս զի առ
այ հաստատուն դրամագլուխ մը հաստատելու
լընաւորութիւն մը ըլլայ որ անոր շահավը շին .
Ելք դպրոցին գաստառաց և սպաստորաց
ականները և ուրիշ մանր մունք ծախքերը հա-
գուին :

Համապատութելին և այսչափ ըստ
ի հաւաքութելին ետեւ աղջիւ Վարդերես աղջան
ապահով ըլլալով առաջիկայ գարծայն բարեյացու-
թեանը վրայ խիցն կանչել կուտայ Մելիքեան
այ Յակոբ աղջան որ ուսմունքը Փարիզ լնելով
Ճարտարապետական արհեստին մէջ չառ քաջ
յուած է և շինուելիք գորոցին օրինակը գծել
առաջ անոր որ ինքը գեռ հան իրէն շէնքը սկսուի :
Երբոցիս հիմնարկութե հանդէսին՝ որուն մէկ երկու
առ հոգի թէ ազգայինք և թէ օտարազգիք ներկայ
երբոր անոր հիմնադիրը Վարդերես աղջան հի-
առաջին քարը ձեռքը առաւ որ դնէ հայոց որ
շատակապետ եկեղեցին զանդակիլ թէ ազգիս
շէնքին և թէ անոր բարեկապաշտ հիմնադրին պա-
մը ըլլալու համար հնչել սկսեց : Եւ հիման
քեւել՝ վրան խորհրդաւոր պատկեր մը և շրջա-
նալ ալ այս խօսքը գրուած արծաթեայ մետաղ մը
ւեցաւ « Միապեան վարժարան հիմնեալ ՚ի
քրէշ 1847 » :

Հայ ազգության շենքին փառաւոր հիմնարկու-

Այս աշխատավոր պատճենը կազմութիւն է առաջ գույք կատարելու համար և այս պատճենը կազմութիւն է առաջ գույք կատարելու համար:

Եր այն տեղի ուսումնաէր երիտասարդներին հոգի քանի մը տորիէ ՚ի վեր Արաբագիտան անուն երութիւն մը հաստատեր են մէջերնին որ շար-
շաբաթ իւրաքանչիւր ընկեր մէկ մէկ քիչ բան
ուուցանելով ընկերութեան սընտուկին, անիկաց
աց բաւական գրամագլուխ մը ընելով օր մը աղ-
ուտ բանի մը հաստատութեանը ձեռք գար-
• Բայց այս ընկերութիւնը իփոստ փոքրիկ ընկե-
թիւն մը ըլլալով մինչեւ հիմա հաւաքածն ալ
կաւ քիչ բան մը եղած է . ուստի մեծարու Վար-
ես աղայն կանչեց այս ընկերութեան գլխաւոր-
ու, տեղեկացաւ անոնց հաւաքած ստակին որբա-
թեանը և ինքն ալ առաստ նուերով մը անոնց
ենակատակ ընկերութեանը յարելով որիշներուն
ի օրինակ ըլլալով, ընկերութեան գրամագլու-
ցն աստիճանը հասուց որ շահովս աղջիկանց
որիկ գալրոց մը կարենայ հաստատուիլ հոն որուն
առ կարօտութիւն ունէին տեղապիր : Գրեթէ

Հասարակ ամէն տեղ աղդիս մէջ ուսման սէրը
շատ արթը լոցած է և այնպէս տեղուանքներ
ու լսած ատեննիս մեզի զարմանք կուգայ . ու
ինչու համար Պուքրէշի պէս լուսաւորեալ
աղք մը մինչեւ հիմա բարակարգեալ դպրոց մը
էր մէր աղդը : Արդեօք հոն տեղի աղդակից-
սիս Խղնիմիտցւոց՝ Վարագաղարցւոց չափ ալ կա-
ւթիւն չունէին . ի՞նչպէս հիմա մէկ մասնաւոր
ովքի մը մէջ իսկցն 2,200 մաճառ ոսկի հաւա-
ին . բարեպահու չեն արդեօք , ի՞նչպէս բազմա-
քաղաքի մը մէջ իրենց սուրբ եկեղեցւոց ուղ-
առ կրօնքը մինչեւ հիմա անարատ պահեցին ,
առներնին օտարազգաց կարօտ չըրին . ագէտ
ովք գիտաւթեան յարդը մի չեին ձանջնար , ի՞նչ
այսչափ ուստումնական մարդիկ ունին մէջեր-
որսնց մէկն ալ խօսքին կարդին գալով վերը իի-
նք այն է գիտնական Վէլիքեան Յակոբ աղայն :
որ այս բաներէն պակաս տեղ մը չունին նէ ,
է հապա արդեօք որ մինչեւ հիմա բարեկարդ-
ց մը չեն ունեցեր Պուքրէշի սիրելի աղդա-
երնիս : Իրենց տարաբաղդութենէն դուրսէն
վասէր՝ շահասէր՝ անձնասէր չար ոգիներ մէ-
ստն պակաս ըլլալով անսնց միաբանական սի-
, արդելք եղեր են և ուր որ սէր չի կայ հոն
մէկ հոգեւոր կամ մարմնաւոր առաքինութիւն-
ժ չունի . հոն իմաստութիւնը՝ հարստութիւ-
կար են : Փառք արարչին , հիմա այն խոսվասէր
կանց ցանած ատելութեան սերմերուն բերած
ն սուուղները տեսնալով Պուքրէշի եղայրներ-
իմացան որ՝ որ գժոխային չար ոգիներուն կա-
ւթեան եղջիւրէն կը հոսին այս սերմերը՝ ըս-
ցին զգուշաւոր պահպանութեամբ պահպա-
հիրենց միաբանութիւնը անսնցմէ : Ալյուսամք
ց սէրը յաւիտեան հաստատ և այս միաբա-
թիւնը յաւիտեան անխուով պիտի մնայ և աս
իս մէծ ապացոյց մըն է նաև դպրոցին յառա-
մութեանը աշխատելնին , քանզի այն տեղէն
աշակերտները ընկերական սիրոյ և աղդասիրու-
ն ձարտասան բարսղիներ պիտի ըլլան և այս
գեղեցիկ առաքինութիւններուն թշնամի ե-
ղողներուն դէմ ալ յնատիր բնտիր ախտեաններ ։



Պատուիք Միասբեմ վարժականին Դ Պատուիք:

Պութքէցիք երախտապարտ սրտիւ իրենց շնորհակալութիւնները ցուցունելու համար երկու գեղցիքի երդ հիւսեցին, որոնց մէկը երգեցին ՚ի նաևապիս կիմարտութեան Միասբեմն վարարանին և մէկն ալ սիրտի երդեն ամէն կիւրակէ առաւառ վարժարանին մէջ ընդ բարեպարագառ մէծադրութիւն ծառը կահանակ Վարդեւեան:

Նաև յատկապէս շնորհակալութեան նամակ մը գրեցին գերապատիւ Միասբեմ ամիրային որ այսպէս բարեխասուակ աղնիւ զաւակ մը նուիրելով աղդին անոր կերպ կերպ միմիթարութեանը պատճառ կ'ըլլ ըս կոր:

Ենա այս վարժանիս գործակալները հետեւեալ արժանապատիւ անձինքն են:

Վարանուա գործիքն: Արդար վարդերես աղա Անսաքեան:

Գանձապէտ: Կարապէտ աղա անուշ:

” Ահատեսի Յակոբ աղա Կազարէթեան:

” Անետիք աղա Կահումեան:

Վարանուա գործիքն: Կարապէտ աղա Անուշ:

Հոգաբարձու: Ահատեսի Աիմեն աղա Փափովիչ:

” Յակոբ աղա կենովիչ:

” Ալթուն աղա Պապիկեան:

Անձարու Վարդերես աղայն այս գովելի գործ գործելէն ետեւ և երկու անգամ Պութքէցիք բարձրապատիւ Արսին տեսութեան յարգանօք հըրաւերները ընդունելէն ետեւ յուլիս ամսոյն 13 ին մէկնեցաւ անկէ գէպ ՚ի հոս իւր հայրենիքը:

Առաջին երդին օրինակը:

Իմաստութեան շնել առաջիք:

Որ ՚ի յերին իտուոյան

Փառա մէծաշն յամակեցին:

Աշխարհայ գուշաշն:

Յոր ՚ի Պութքէցիք այս ի՞ր աղդին:

Կամիկէ զբաշոյն որ արծան:

Սին կենտանին ՚ի Պայտաշոյ:

Սին վեհ Անուի Արշայշեան:

Որում ասպետն այս ինիւնածեւլ:

Լաւութան վնի իտալուր:

Զականառու կամապակին:

Ժէր աշուից եկիւ ՚ի :

Վէհ թարեւ Շումարին այն:

Պէտքու Յուրու ՚ի օքին:

Անին այս յարուց Տէր եր:

Զայս իշխան ՚ի ողորմած:

Աւ գուրդ Երեւ վարդուան:

Անձանիք ՚ի գլուխ:

Սունդաւան հանգոյն Շիշալան:

Հըրաւանի գործով ՚ի ընդու:

Ցույան իսկ հայրը հայրենեաց:

Տէսէ ՚ի ինու պարածածիւալ:

Մէրի ՚ի բուրդ հէրեւար:

Արտէն սովուչ ճոր հայրելուց:

Որոյ գըտաւ ինչ սապար:

Եկիւյեւաց կանուեից

Նոյն երկանց բարեւար:

Յամեն որու իբրեւ սուրիւ:

Վանեաց ճըտաւ լուսաւար:

Արդեւ անուն իւր աղդին:

Տէրու յանձնան իւր աղդին:

Արդեւ անուն իւր աղդին: